

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

54^{րդ} ՏԱՐԻ, 2. ՇՐՋԱՆ

թի 21

16 ՅՈՒՆԻՍ 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԳՐԱԴԱՐԱՆԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐԵՒԵԱՑՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Բժեկական Գրոհիկ. ՏՈՒԹ. Ե. ՄԱՍԻՍ:—Հոգի գինույ (Բանաստեղծութիւն Ե. Պոսքլեռի)
Իրաբար քարզմ. ՏԻԳՐԱՆ ԵԼՔԵՆՃԵԱՆ:—Պատիւը. Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ:—Ներկայողիկն
մեջ (Սիրերգ) Մ. Ա. ՊԱՐՍԱՄԵԱՆ:—Այլոյամուրիւնը. Մ. ՈՒՂՈՒՐԼԵԱՆ:—Օրուան
Նօթիւ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթերի սարեկան բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար ԲԱՆՍՈՒՆ ղրԵ.
Եւ գաւառներուն համար յիսուն ղրԵ., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Ֆրանկ կամ
5 րուպլի: Թղթաստրական ծախքը խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրու-
թիւն չընդունուի: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ
հրապարակ կ'ելլէ ամեն շաբաթ առտու:

Ձի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուի:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշնի պայ-
մաններով:

Ձեռքի կը ծԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐՄՅԻ
Հասցէ

در علیہ دہ غلطہ دہ (ماسیس) غنیمتی ادارہ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Հալաքիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

Ծաղկաւոր

Թէլը, որ այսօր գրեթէ բոլոր ժողովրդաց զխաւար ըմպելին դարձած է, ա՛յնքան բաղաժաթիւ տեսակներ ունի որ, արդարեւ գործածողներուն համար բուսկան դժուար է լու ընտրութիւն մը ընել: Այդ տեսակներէն մմանք նշանաւոր են իբր խորժանամ եւ քաղցրաբոյր, մմանք ալ թէեւ նոյնքան ախորժելի համ ու հոտ չունին, գերազանց են սակայն իբր կաշուաւորիչ եւ զօրացուցիչ: Վերջապէս իւրաքանչիւր թէյ իր ուրոյն յատկութիւններն ունին որոնք զինքը կը զանազանեն ուրիշ, տեսակներէ:



Սակայն կալ թէյ մը, որ այդ յատկութեանց ամէնէն կարեւորները կը միացնէ իր վրայ, այսինքն՝ գոյն, համահոս եւ մանուշագ կաշուաւորիչ եւ զօրացուցիչ անզուգական ազդեցութիւն մը, եւ այդ թէյն է ճաբոնցի քիյը, որ այդ յատկու-

թեանց շնորհիւ կը յարմարի ամէն տարիքի ու կազմութեան, ամէն կլիմայի եւ եղանակի եւ ամէն ճաշակի:

Յալբուսեան եւ Իսազուլեան քիյի մեծ վաճառատունը, իր բաղաժաթիւ յաճախորդաց ծառայութիւն մը մատուցանելու համար, այս ա՛յնքամ մեծաքանակ ներածած է ճաբոնական զրաւ թէյ մասնաւոր եւ դոկտան աւափերով ու կը հրաւիրէ օգտուել այս առիթէն բոլոր տնայնք, որ կը փոփաքին ունենալ թէյ մը:

Համով, հոտով, առողջապահիկ եւ կազդուրիչ:

Սոյն վաճառատան մէջ կան նաեւ հնդկա-տն, չինական, Սէյլան եւ Ճապոնի տեսակ տեսակ թէյեր:

8—10

Ուսադուրիւն, մարգալի

ՏՈՔԹ. Բ. ԷՄԻՐՁԷ

Հանրածանօթ մանուկագուս եւ կնախաւարու (gynécologue), Տօքթօր Էմիրզէ որ 15 տարուան գործունէութեամբը մեծ համբաւ ստացած է, կը ծանուցանէ յարգաւ յաճախորդներուն թէ բնակարանը փոխադրած է Պէքեար փողոց թիւ 18 Բաց ի վերայիշեալ իւր մասնագիտութենէ կը բուժէ նաեւ նորագոյն մէթաներով ջղային եւ հոգեկան ու երեւակայական ամէն տեսակ հիւանդութիւնները, ինչպէս նէվրոսթէնի եւ tic անուանուած աչքի երեւի եւ ուսերու աչքի եւ ալամայ շարժումները եւ դաշտանի դաղորումէ յառաջ եկած ջղային խռովումները եւ Երիտասարդական մալիքները, ինչպէս նաեւ գինեմալիքը, մօրֆնամալիքը եւայլն: Կիրակիներէն դառ ամէն օր կէսօրէն սկսեալ մինչեւ երեք ժամ հիւանդ կընդունի, եւ ուրբօթ օրերը ձրեօթօր կը դարմանէ վկայեալ աղքատները, 8—10



ՅՈՎԱԼԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ (ՄԵՂՐՈՒՆԻ)

ԱՏԱՄՆԱՐՈՅԺ

Մուղագէրիէ Հիւանդանոցին եւ Պարսկական Ինսպանատան Բերա, Մեծ Փողոց, Թագսիմ, թիւ 61 Զբրանեան արաւոքման

Պալպալեան ամէն օր աղուայի ամէն տեսակ հիւանդութիւններով տառապողներ, կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Նրեքշաբթի մինչեւ ժամը 5: Գիշերուան օր եւ է ժամուն կարելի է դիմել: Պալպալեան կ'երաշխաւորէ իր լեցուցած ու շինած աղուաները: Ճորեկները աղուայ քաշել տալու համար որոշ վարձք մը չկայ. քաշել տուողին կամքէն կախեալ է: Վկայեալ տառամաբու-ժուհի Տիկին Բօլին եւս կը դաժուի միշտ նոյն դարմանատան մէջ: Ազխանեան ձրի 8—10

CAISSE PATERNELLE

ՔԵՍ ԲԱԳԵՌՆԵԼ

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԻՄՆԵԱԼ Ի ԲԱՐԻՋ 1841 ԻՆ

ԿԸ ԳՈՐԾԷ ՖՐԱՆՍ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀՈԿՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱԿԱԾՈՒՆ ՏԱԿ

Սկիզբէն ի վեր ապահովագրեալներու եղած վնասում 300 միլիոն ֆր.

Սկիզբէն ի վեր արձանագրեալ ապահովագրութիւն 700 միլիոն ֆր.

ԸՆԹԱՑԻԿ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՖՐ. 85,000,000

ԴՐԱՄԱԳՂՈՒՄ ԵՒ ՊԱՀԵՍՏ 62,750,000

Ուրեմն ընթացիկ ապահովագրութեանց գումարին վրայ պահեստի համեմատու
թիւնն է 740/0. արով ՔԵՍ ԲԱԳԵՌՆԵԼԻ ընծայած երախտագրութիւնը գէր ի վեր կը
հանդիսանայ ուրիշ ընկերութեանց ցոյց տուած երախտագրութեանէն:

Ընկերութեան վարչական ինտրուդը կազմուած է ֆրանսայի ամէնէն նշանաւոր
դրամատէրներէն. ինչպէս

Մ. ՌԸՆԷ ՊՐԻՍ, Արեւմտեան Ֆրանսայի երկաթուղեայ ընկերութեան եւ Քրէտի
Լիոնէի վարչական ինտրուդայ անդամ:

Մ. ՄԱՐԲԻ ՏԸ ՖԼԵՌ, Դրամագրանդիք ընկերութեան վարչական ինտրուդայ անդամ:

Մ. ԿՈՍՍ ՏԸ ՍԷՆ, ԿիւլէիՄ, նախկին գանձապահ:

Մ. Օ. ՄԱԶԸՐԱ, Ընդհ. Տնօրէն Քրէտի Լիոնէի:

Թուրքիոյ Տնօրէն Փ. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՔ

Պոլիս, Սուլթան-Համաժ, Բասաժ Քաթրոնքոզու

Ընկերութեան վրայ տեղեկութիւն առնելու համար դիմել Քրէտի Լիոնէի:

ԾԱՆՈԹ.— Շահալուր դիւք պիտի տրուի այն ֆինիչին որ կարեւոր ազդեցութիւն մը ի
սպորձած քլայ անձնապէս:

1—10

ԱԴԱՄ ՎԱՐԴԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ամեն տեսակ քօհաֆիյէ ապրանց

Մեծ—Շուկայ, Քիւրքէիներու դրան կից, Թ. 41—43

Նայնպէս, արանց եւ կանանց ճաշակաւոր
հովանոցներու վաճառատուն, Պոլիս, Սուլ-
թան—Համաժ, Միալլի Դրամատան դէմ
թիւ 58:

Սոյն երկու վաճառատուններուն մէջ
գտնուած ապրանքները, թէ՛ թօհաֆիյէի
վերաբերեալ եւ թէ՛ արանց ու կանանց յա-
տակ հովանոցներ, իրենց գեղեցկութեան
կը միացնեն տակաւնութիւն, եւ դիւրամատ-
չիլի գիներու առաւելութիւնն ալ կ'ընծայեն
հասարակութեան:

Այլամ վարդեան մեծապէս գոհ
թաղուցած է իր բաղձաթիւ յաճախորդներէ:

պէտք է որ Շուկայ, Կլայ ամէն ընտանիք
այցելէ անգամ մը այս երկու վաճառատուն-
ները՝ եղանակին պէտքերը հազարու համար:

1—10

ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՑ ԹԻԻ 12

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ
զառ, մասնագիտաբար եւ երկար տարիներէ
ի վեր կը դարձանէ առամաքի, աղեաց,
միզային ճանքաներու հիւանդութիւնները,
ջղային տկարութիւնները, հին եւ նոր գա-
ղիական տխտերը: Այս վերջին տխտերը ա-
ռանց ստամոքսի խանգարման եւ նորագոյն
մեթոտներով կը բուժէ կարճ միջոցի մէջ:

Հիւանդ կընդունի ամէն օր կէս օրէ
վերջէ: Զօրեղութիւն օրերը միայն ձրէ: 1—10

ԱՅՐ, ԿԻՆ, ՏՂԱՅ

Մարդս տենդի հիւանդութենէ վերջը տկար կը մնայ, մանաւանդ տղայ մը:
Ինչպէսն հարկ չիտեսնուի, հիւանդին պէտք է տալ



SCOTT'S EMULSION

և տկարութիւնը անմիջապէս և վստահափար կը փարատէ
և կը տեսնուի որ

ԲՍԿՕԹԻ ԲԱԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

մարմինը պատող բոլոր տկարութիւններու դեմ
ամենամեծ դեղ է: Երեգական տակ ասոր հաւասար
բան մը չիկայ. այնպէս կատարեալ կը բժշկէ՝ որ կը
կարծուի թէ հիւանդութիւնը կուտէ ու կը կլլէ:

Բոլոր բեռնաբերները և բեռնափոխները և ծախս:

Շեշտով վաճառող տնօրէնը ուշա-
տրութիւն ընել պէտք է:

18

ՑԱՄԱՔԱՅԻՆ ԵՐՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՊԱՅ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

ՎԻԹՅՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՄԷՆ ԴՐՈՒԹՅՈՒՆ ԿԸ ԳՈՐԾԱԴՐԷ

Ունի կեանքի, օժիշի, արկածի, ցմահ թոշակի նիւղեր
VICTORIA ՎԻԹՅՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ կեանքի ապահովագրութիւններ ձեռն թէ՛
DE բժշկական քննութեամբ եւ թէ առանց բժշկական քննութեան
BERLIN Առանց բժշկական քննութեան եղած կեանքի ապահովագրութիւններ
բուն վճարումները չբաժանան մասնավարներով տեղի կունենան,
սկսեալ 5 դրուէն

Ապահովագրեալ գումար 1903ին Ֆր. 1,325,000,000

Պահեստի դրամ 1903ին » 510,000,000

Հանձնարուած 1853 սեպտ. 20ին ար-

այսկանհրովաւաւով եւ ուղղակի
կառավարութեան հսկողութեան ներ-

քէ:

Օսմ. կայսր Պանրս
եւ Քրէտի Լիոնէ

Լիազօր Ընդհ. Ներկայացուցիչ
ՄԻՀՐԱՆ ՍԻՆԷՄ ԴԱԼՖԱՅԵԱՆ

Պոլիս Քաթրեքթօղլու խան

20-50

ՄԱՍԻՈՆ

54^{րդ} ՏԱՐԻ, 2. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 21

16 ՅՈՒՆԻՍ 1905

ԳՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐԵՒՇԱՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Անցեալ ուրբաթ օր, Սեւամլըքի արարողութենէն ետքը տեղի ունեցած եղեռնական վատ արարքէն՝ որ պայթում մը առջեւ բերաւ՝ Վեհ. Կայսեր նուիրական անձը Նախանձամութեան շնորհիւ պահպանուած ըլլալուն բերկրալի առթիւ, կիրակի առաւօտ գոհարանական հանդիսաւոր մաղթանքներ կատարուեցան մայրաքաղաքիս բոլոր հայ եկեղեցիներուն մէջ։ Ս. Պատրիարք Հայրը շաբաթ օրը Կայս. Պալատ երթալով, յանուն Ազգին խնդակցական և երախտագիտական զգացումներ մատոյց յոտս Կայս. Գահոյից։ Տ. Բարթողիմէոս և Տ. Մեսրոպ արքեպիսկոպոսներն եւս կիրակի օրը Կայս. Պալատ երթալով, բարեմաղթութիւններ ըրին Կայսերական արեւատութեան համար։

Բարոզիչ եպիսկոպոսներուն ու վարդապետներուն, աւագերէցիներուն և Թաղ. Խորհուրդներուն ուղղուած Պատրիարքական շրջաբերականն էր հետեւեալը.—

«Աստուած զերծ պահէ մեր Վեհափառ և Մեծազօր Կայսրը ամէն տեսակ վտանգէ։

«Կը հրաւիրենք Մայրաքաղաքիս բոլոր մեր եկեղեցեաց հոգեւոր պաշտօնէութիւնը, որպէս զի վաղը՝ կիրակի առաւօտ՝ արարողութեանց պահուն գոհարանական աղօթքներ ըրարձարենք առ Բարձրեալն, որ անխիղճ եւ վատ արարքէ մը անփորձ պահեց Օսմանեան Կայսրութեան Օգոստոսփառ եւ Վեհազօր Կայսրը, յուրախութիւն բոլոր իւր հաւատարիմ հպատակներուն եւ մանաւանդ Հայոցս, որ իրենց հաւատարմութեամբ եւ աշխատասիրութեամբ միշտ արժանացած են Կայսերական շնորհներու»։

Կիրակի առաւօտ, խուռներամ բաղմունքիւ հաւաքուած էր բոլոր եկեղեցիներուն մէջ ուր գոհարանական մաղթանքներ կատարուեցան հանդիսաւորապէս։ Մայր եկեղեցւոյ արարողութեանց նախագահեց, Պատրիարքական հրաւերով, եպիսկոպոսական դասուն երիցադոյնը՝ Տ. Մեսրոպ Սրբաղան, որ քարոզ խօսեցաւ «Տէր կեցո՛ղ թագաւորն մեր ընդ երկայն աւուրս» ընաբանով։ Ս. Պատրիարք Հայրը նախագահեց Եկեղեցւոյն արարողութեանց, որուն տօնախմբութեան առթիւ հրաւիրուած էր նախապէս։ Ն. Ամենապատուութիւնը քարոզեց և աղօթեց Վեհ. Կայսեր արեւատութեան համար։ Նոյնպէս բոլոր քարոզիչ եպիսկոպոսներն ու վարդապետները՝ իւրաքանչիւրը իր եկեղեցիին մէջ։ Ամենուրեք, ժողովուրդը ջերմազին «ամէն»ներով մասնակցեցաւ աղօթքներուն ու մաղթանքներուն։

Օսմանեան երկիրներու մէջ ընակող բոլոր օտար հպատակներն, ինչպէս Կայսերական բոլոր հպատակները, խորին վիշտ և բուռն զայրոյթ զգացած են ուրբաթ օրուան վատ արարքին պատճառաւ, և ամէն ոք ցնծաց որ Աստուածային Ս. Աջը պահպանեց Վեհ. Կայսրը։ Ամէն ոք հիացաւ Ն. Վեհափառութեան ցոյց տուած քաջասրտութեանը վրայ, և ո՛չ միայն տեղական մամուլը՝ այլ նաեւ եւրոպական թերթերը հիացում կ'արտայայտեն՝ դրուատական յօդուածներով։— Եւրոպայի բոլոր Վեհապետները, ինչպէս նաեւ

Պարսից Շահը, Ֆրանսական Հանրապետութեան Նախագահ Պ. Լուպէ, Եգիպտոսի Ստիվը, Պուլկարիոյ և Գարատաղի իշխանները ջերմապէս շնորհաւորած են Ն. Կ. Վեհափառութիւնը Որ, ի պատասխանի, գոհունակութեամբ հեռագրեր ուղղեց։—Բոլոր նախարարները և քաղաքային, կրօնական ու գիտութեան բարձրաստիճան պաշտօնատարք, ինչպէս նաև մայրաքաղաքիս օտար դեսպանները, հպատակ հուսարակութեանց հոգեւոր պետերը, սեղանաւորական և ուրիշ հաստատութեանց Տնօրէնները ուրբաթ և շաբաթ Կայս. Պալատ երթալով՝ խնդակցութիւն մատուցին որ շնորհիւ Աստուածային Աջոյն՝ պահպանուեցաւ Վեհ. Կայսեր Նուիրական անձը։ Կայս. Պալատ գացող բոլոր անձնաւորութիւնք իրենց անունն արձանագրեցին Ա. Քարտուղարութեան սենեակը գտնուող տոմարին մէջ։—Եւրոպական մայրաքաղաքներէ յաջորդաբար հասած հեռագիրներ կը հաղորդեն թէ օսմ. դեսպաններն ընդունեն են Արտաքին գործոց նախարարներուն և ուրիշ պետական անձնաւորութեանց այցելութիւնները, նոյնպէս օսմ. հր. պատակաց երեւելիներու այցելութիւնները, որոնք ամէնքն ալ իրենց նողկանքը կ'արտայայտեն այս եղեռնական վատ արարքին համար և խնդակցութիւն կը յայտնեն որ Ն. Կ. Վեհափառութիւնը զերծ և անվնաս մնացած է։

Վեհ. Կայսրն իմանալով որ ուրբաթ օրուան վատ արարքի միջոցին Ձէ հոգի մեռած և 58 հոգի վիրաւորուած են, հրաման ըրաւ որ վիրաւորներն անմիջապէս փոխադրուին Համիտիէ մանկանց հիւանդանոցը և ուրիշ հիւանդանոցներ, և հարկ եղած դարմաններն ի գործ դրուին։ Նոյնպէս, Կայս. անձնական Գանձէն դրամական նպաստներ շնորհուեցան այս եպիսկոպոսի ոճրին զոհ գացող անձանց ու վիրաւորներու ընտանիքներուն։—Եւրոպայի գիւտագիտական չըջանակներուն մէջ տիրող կարծիքին նայելով, կ'ըսէ Սապան, ոճրագործին համար կ'ըսուի թէ անկարելի է որ իսլամ եղած ըլլայ. նաև, ամէն պարագայի մէջ, օսմ. երկիրներու ժողովուրդներէն ալ չէ, այլ մէկը այն անարդիւթիւններէն որոնք աշխարհի ամէն կողմը նողկանք կ'ազդեն և

խիստ հալածումներու ենթարկուած են։ Նոյն թերթը կ'աւելցնէ թէ Կ. Պոլսէն հետեւեալ հեռագիրը ուղղուած է Վիէննայի լրագիրներուն. «Անարդ ոճիրը գործող գձուռ անձը տակաւին գտնուած չէ։ Նախ հաւանական է որ պայթուածին ատեն մեռած ըլլայ, իր արժանի պատիժը գտնելով»։


ՀԱՒԱՏԱՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

Խառն ժողովոյ չորեքշաբթի օրուան նիստին սկիզբը՝ Ս. Պատրիարքը ծանոյց թէ անցեալ ուրբաթ տեղի ունեցած նողկալի ու ցաւալի պատահարին առթիւ, անձամբ Կայս. Պալատ դիմելով փութացեր էր յանուն Հայ Ազգին մատուցանել յոտս Գահոյից Ն. Կ. Վեհափառութեան, անոր զգացած խորին վիշտը նոյն եղելութեան համար, և միանգամայն անհուն բերկրանքը որ ամենակալն Աստուած վտանգէ զերծ պահած է Օգոստոս փառ և Վեհազօր Կայսեր թանկագին կեանքը։ Ն. Սրբազնութիւնը աւելցուց նաև թէ անմիջապէս Պոլսոյ և չըջակայից եկեղեցիներն ալ յասուել չըջաբերականներ զրկած էր գոհաբանական աղօթքներ մատուցուելու համար, և ըստ այնմ, կիրակի առաւօտ, ժամերգութեանց պահուն, հանդիսաւորապէս կատարուած էին գոհաբանական արարողութիւնք, որոնց մասնակցած էր ժողովրդեան հոծ բազմութիւն, ամէն եկեղեցւոյ մէջ, ջերմագին մաղթանքներով։

Խառն ժողովը գոհութեամբ լսեց Ս. Պատրիարք Հօր այս կարգադրութիւնները և Օգոստոս փառ Կայսեր արեւչատութեանը համար մաղթանքներ կատարուելով հանդերձ՝ ժողովը յանուն Ազգին՝ յոտս Կայս. Գահոյից մատուցուելու համար Ուղերձ մը պատրաստեց և ստորագրեց՝ որ կը յայտնէ ընդհանուր ժողովրդեան զգացումներն ու անդրդուելի հաւատարմութիւնը առ փառապանծ Գահին Օսմանեան և առ Մեծազօր և Օգոստոս փառ Վեհապետն նորին։

Այս ուղերձը յանձնուեցաւ Ազգ. Պատրիարքարանի տաղ գործակալատար Արիսէֆ. ի, որ Կայս. Պալատ տարաւ զայն։ Առաջին քարտուղար Վսեմ. Թահսին փաշա ընդունեց ուղերձը, մատուցանելու համար յոտս Կայս. Գահոյից։

ԼՈՂՈՒ ՊԵՆՏՈՅ



Արկեալ ի չիլ՝ յերեկոյի միում ա'յապէս
Ձայնէր հոգի գինւոյ. «Առ քեզ երգեմ, է՛ մարդ,
Յապակեղէն ի կարմրախից արգելանէս.
Առ քեզ, ա'յ հէքդ, երգեմ ի սէր ու ի լոյս զըւարթ»:

Գիտեմ քանի՛ երկանց տանել քեզ հարկ հնաս,
Քանի՛ քըրտնել քըրտունս ի բլուրդ արեւակէզ,
Մինչեւ առի ես զայս հոգի եւ զկեանս իմ զայս.
Այլ չեղէց չար, ընդ երախտեացդ հատուցից քեզ.

Ձի ցընծութիւն անբաւ անչափ ըզգամ յանձին՝
Վաստակելոյդ մինչ մրտանեմս ես ընդ կոկորդ.
Եւ է ինձ քաղցըր գերեզման՝ ծոց քո ջերմին
Ուր՝ քան ի ցուրտ նըկուղս՝ հանգչել ըզձամ ցանկորդ:

Ըզխրախճանաց տօնից լըսե՛ս ձայն ցընծաբեր,
Եւ ըզյուսոյ՝ որ մընչէ յիմ թընդուն ծոցի.
Դու արմուկն յեց ի սեղան, ծղիս պարզեալ ի վեր՝
Փառս ինձ տացես, եւ գոհ զինէն սիրտ քո լիցի:

Յաչըս կնոջ քոյ վառեցից բոց խընդութեան,
Որդւոյ քում տաց ոյժ նորաձիր, գոյն երեսաց.
Եւ ես եղէց վասըն ըմբլին անտիական՝
Իւզ հըզօրիչ՝ իւ պընդի մարդ ի մարտ կենաց:

Ձերդ սերմն անկայց, ես բուսածին հոյզ դիւցական,
Ի քեզ՝ յաջոյ յաւիտենից Սերմանողին,
Եւ ի մերմէ սիրոյս, հանգոյն չըքնաղ ծաղկան,
Ծընցին նըւագք առ էն ի վեր սլացեալք յերկին»:

Ե. ՊՈՏԸԼԷՌ

Քարզմ. Ի Գալլիականէ
ՏԻԳՐԱՆ ԵԼՔԷՆՃԵԱՆ

ԳԱՐՐԻԷԼ ՆԵՐՇԱՊՈՒՂ



Մասիսի վերջընթեր թիւին մէջ՝ երբ խմբադրականի մը նիւթ կ'ընէինք Գարրիէլ Ներշապուհի հիւանդագին ու չքաւոր վիճակը, ծերունի և բազմավաստակ թուաբանը իր հոգին կ'աւանդէր Մէրսինի մէջ:

Հիւանդանոցի մը անկիւնը կամ ընտանեկան աղքատիկ յարկի մը տակ՝ օգնութեան կարօտ վիճակի մէջ մեռնող հայ վարժապետներուն վրայ գրելը այնքան հին ու կրկնուած տխուր յանկերգ մը դարձած է, որ ամէն անգամ միեւնոյն բաներն ըսելէ կը քաշուի հրապարակագրին գրիչը: Եւ ի՞նչ օգուտ կրկնելէ:

Բայց նիւթական տեսակէտէն դուրս, կ'արժէ որ Ներշապուհի նախկին սաներէն մէկը՝ որ աղէկ ու երկար ատեն ճանչցած ըլլայ զինքը՝ կենսագրական ուրուագիծ մը նուիրէ անոր յիշատակին, յատկանշելով անոր կատարած դերը մեր կրթական գործին մէջ, մօտաւորապէս կէս դարու ժամանակամիջոց մը: Նոր սերունդին համար՝ այդ հմուտ թուաբանը ու արդիւնաւոր ուսուցիչը՝ մոռցուած մըն էր գրեթէ, և մոռցուած ու լքուած մեռաւ:

ԲԺՇԿԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Այնու եւ յուրիւնքն: — Իրարու յաջորդող վիժումներ: — Այնուցեալ սեքսուալիզմ: — Այնուցեալ սադոմազիս: — Ի ծնէ արեւալոյս: — Սոսկալիք Ծառաւամբութիւն (Dypsomanie): — Պատահաբար այնուպէս յուրիւնքն: — Կիրակիի սղայի: — Ֆրանսա կրկնող... այնուի մեջ:

Մանկաբարձական թերթի մը մէջ, Տիկին Լուիզ Թուսէն, առաջնակարգ մանկաբարձուհին՝ այս անգամ իր Causeries կը նուիրէ յղութեան վրայ ալքոլին ունեցած ահաւոր և չարաշուք ներգործութեան: A propos զբուռած մըն է այս և եթէ Թաւաշանճեան մրցանակին ենթարկուելու համար յոշուած մը խնդրուէր իրմէ՝ ապահովապէս ասկէց աւելի օգտակար և աղքեցիկ գրութիւն մը չը պիտի կրնար խմբագրել:

Սրինակ մը միայն մէջ կը բերէ թէ և բայց այս օրինակը ինքնին բաւական է ամենախիստ դաս մը ըլլալու ամէն անոնց որոնք պիտի ամուսնանան և ամէն ամուսնացեալներուն որոնք խղճի զգացում կը կրեն և չեն ուզեր իրենց զաւակաց (եթէ աշխարհ գալու և ապրելու դժբաղդութիւնը ունենան) յաւիտեանական անէծքին ենթակայ ըլլալ: Գինի մը տարի առաջ այցելութեան կուգայ իրեն կին մը որուն տեսքը իր մտաց առջև կը բերէ յղութեան վրայ ալքոլին ի գործ դրած գարշիլ չարիքներուն շարքը: Այցելու կինը շատ տարիներէ ի վեր յաճախորդն է Տիկին Լուիզին և լաւ յաճախորդ մը իրաւամբ՝ զի միշտ պէտք ունեցած է անոր: Բաշտողը կին մը եղած է սկիզբները, բայց այսու հանգերէ յղութիւն մը ի կատար հանած չէ: Իրարու յաջորդող եօթը վիժում ունեցած է: Յղութեանը միջոցին առանց պատճառի յաւեր կը զգայ այն աստիճան որ անկողին կ'իյնայ, չեղերը օգուտ չեն ընել և մանկաբարձին ձեռաց մէջ կը փամառնէ մեռած սաղմ մը: Զինք անգամ վիժումը տեղի կ'ունենայ չորրորդ ամսուն սկիզբը և երկու անգամ ալ վեցերորդ ամսուն վերջերը:

Այս բոլոր վիժումները իրենց արեւնհոսութիւններովը և անհանգստութիւններովը՝ կանոնաւոր յղութիւններէ աւելի յոգնութիւն պատճառած էին տարաբաղդ կնոջ և մանկաբարձուհին՝ տան ամենէն՝ սովորական սեղանակիցն եղած էր:

Կնոջ ամուսինը խելացի անձ մըն էր, գործի մէջ փայլուն դիրք մը ունէր և շատ ալ դրամ կը շահէր. պակասութիւն մը միայն ունէր, այն էր Ակումբը: Իր ուրախ գուարթ խօսակցութեանը համար հոն շատ կը փնտրուէր և ինքն ալ հոն յաճախելով հաճոյք կ'իմանար: Ամէն գիշեր Ակումբը ժամանակ կ'անցընէր և թեթեւամիտ խօսակցութեանց ոգեւորութեան պահուն իրարու ետեւ կը կոնծէին տեսակ տեսակ ըմպելիներ: Այնպէս որ միշտ տուն կը դառնար թեթեւ մը արեւցիկ վիճակի մօտ, թէ և առանց անցնելու սիրուն զուարթութեան մը ներքի սահմանները: Բնաւ գինով վիճակի մէջ երեւցած չէր: Ասով հանդերձ ի վերջոյ կատարեալ ալքոլացեալ մը եղած էր: Եւ ալքոլով այսպէս յաղեցած վիճակի մէջ տուն գալէ վերջ, թունաւոր գգուանքներ կը շալլէր իր գեղանի փոքրիկ կնոջը դոր գորովալիւր կը սիրէր:

Աստ կը յիշատակենք երեւոյթ մը որ հակառակ իր յաճախութեան՝ ըստ բաւականի գիտցուած չէ. այն է ալքոլին թունաւոր ներգործութիւնը՝ սրուն բեղմնաւորիչ հեղուկին վրայ: Գիտական շատ շահագրգիռ ուսումնասիրութիւններ հաստատած են թէ բեղմնաւորութեան գործունեայ և շարժուն այն բջիջները որոնք սերմնակենդանք (spermatozoides) կը կոչուին եւ իրենց երկար պոչին ձաղկուններովը արգանդը կը մտնեն եւ ձուաբեր խողովակներէն անցնելով մինչեւ ձուարանն իսկ կերթան ձուն գտնելու համար. այդ սերմնակենդանք ալ կ'ալքոլանան, ինչպէս արուն ուսկից յառաջ կուգան: Իրենց նիւթը կը թրմուի ալքոլով եւ երբ ձուին արարչահիւթին (protoplasma) մէջ կը մխուին անոր հետ միանալու եւ այսպէս նոր էակի մը զարգացումը պատրաստելու համար, անոր կը հաղորդեն իրենց գինովութիւնը եւ

սաղմը իր սկզբնաւորութեանը մէջ կը թու- նաւորուի:

Արդ՝ կինեւ կան որոնց այս ձեւային թու- նաւորութիւնը այն աստիճանն է որ սաղմին զարգացումը առաջ չերթար, սաղմը արգան- դին մէջ կը մեռնի եւ յղութեան կանոնա-ւոր ընթացքը յանկարծ կընդհատի վիժումով մը զոր կնոջ առողջութեան մէջ ոչինչ կրնայ նախատեսել տալ:

Ճիշդ այս բանը պատահած էր Տիկին Լուիզի յաճախորդին: Անուսինը յանգէտս՝ միակ յանցաւորն էր եւ երբ ասդին անդին կ'երթար եւ կնոջը կարծեցեալ ծննդական ակարութիւնը կ'ողորար եւ կ'ամբաստանէր զանի թէ չէր կրնար իր ծոցին մէջ կրել տղայ մը մինչեւ իր որոշեալ օրը, աւելի լաւ կ'ընէր ինքզինքը կոծելով եւ նշմարելով թէ իր ամէն իրիկուն կուլ տուած ըմպելիներուն մէջ վնասուելու էր գաղտնիքը այն ամէն վի- ժումներուն որոնք իր ընտանեկան յարկը տըխ- րութեամբ կը համակէին:

Օրին մէկն ալ, ձմեռուան գիշեր մը, երբ Ակումբէն դուրս կ'ելնէր զուարթօրէն սրաքանելով, սաստիկ պաղ մը կ'առնէ: Հե- տեւեալ օրը բժիշկը կուգայ թոքատապ մը կը գտնէ որ կրնար թեթեւօրէն անցնիլ եթէ սոսկալի ալքոլական զառանցանք մը երեւան չեղնէր: Ութ օրէն մահը վրայ կը հասնի:

Երբ սուգի չըջանը կը լրանայ, մանկա- մարդ եւ գեղանի այրին նօրէն կ'ամուսնա- նայ եւ այս անգամ... ջուր խմող ամուսին մը կ'առնէ:

Գինեպանները կ'ըսեն թէ ջուր խմողները չար մարդիկ են, բայց այս նոր ամուսինը սուտ կը հանէ այդ առածը զոր Նոյ նահապետին աղանդաւորները իրենց շահուն համար կը տարածեն: Իր կիներ՝ չատ երջանիկ կ'ըլլայ եւ վեց տարուան մէջ չորս աղուոր աղաքներ կուեննայ որոնք այժմ մեծցած են և իրենց քաջառույգ առողջութեամբը ցոյց կուտան թէ իրենց մօրը վեց վիժումները ուրիշ պատ- ճառ չունէին եթէ ոչ առաջին ամուսնոյն սերմնական ալքոլացումը:

Դժբաղդաբար, ծննդական ալքոլացումը միշտ սաղմին մահը եւ վիժումը չը պատճա-

ռեր: Շատ անգամ յղութիւնը կը լրացնէ իր չըջանը եւ տղան աշխարհ կուգայ այնպիսի գործարանական ստոր վիճակի մը մէջ որ եթէ ապրելու չար բաղդը ունենայ՝ ամբողջ կենացը միջոցին ամէն թերութեանց (tare) եւ ամէն անկածութեանց (déchéances) են- թակայ էակ մը կ'ըլլայ: Այս ողբալի պայ- մաններուն մէջ ծնած աղաքներու կէսէն ա-ւելին իրենց ծննդեան առաջին շաբթուն կը մեռնին: Մնացածներուն կէսը երեք տարե- կանէն առաջ կը մեռնի: Եւ ինչպէ՞ս կուզէք որ դիմադրեն առաջին մանկութեան հիւան- դութիւններուն, սննդատութեան (athrepsie), թոքախտին, մէնէմէթիին որոնք կըսապառնան անոնց: Եւ գիտէ՞ք ի՞նչ կ'ըլլան մնացեալ 20—25 տղաքը որոնք խնամքներու շնորհիւ կենաց առաջին տարիներու սոսկալի խութե- րէն կանցնին: Ասոնց ամէնքն ալ իրենց ժա- ռանգական թերութեանց սաստկութեանը համեմատ ամենավատթար ջլախտներու (nev- rose) կենթարկուին:

Թուե՞նք այս ջլախտները: Զլապար (Chorée) Արգանդախեղթ (Hystérie), Լուսնոտութիւն (Epilepsie), Զղատկարութիւն (Neurasthé- nie), Զղաղող (Tremblement), Մտքի տկա- րութիւն, Տխմարութիւն, Ապուշութիւն (Jdiotie) Ուղեղի ջրգողութիւն (Hydrocé- phalie), Փոքրագլխութիւն (Microcéphalie), Ուղեղի կարծրութիւն: Մէկ քանիները տղայ հասակուն զառանցանք, զգայարանաց պատրանք (Hallucination), Մեղամաղձու- թիւն, Մենամոլութիւն կ'ունենան:

Այս այլասերեալ էակներն ամենքն ալ հաւապարապէս իբր յատկանիշ ունին գոր- ծարանական դիմակալութեան պակասու- թիւն մը որ կ'ենթարկէ զիրենք ամէն տա- րափոխութեանց և համաճարակներու: Մշակ- ման անհուն դաշտը կը կաղմեն յորում նա- խանձնդդէմ կը բարգաւաճին Սիֆիլիսը, Թիւպէրքուլը (լիքեմ), առանց հաշուելու երկրորդական ախտերը որոնք նուազ սոսկալի չեն անոնց համար:

Եթէ կարենային գէթ իրենք զերծ մնալ սոսկալի թոյնին ուղղակի ներգործութենէն որ իրենց գոյութեան աղբիւրը կը թունաւորէ,

քիչ մը յոյս կունենային գոնէ իրենց գործարանները զօրացնելու, իրենց շրջային գերութիւնը կազդուրելու և թերեւս իրենց չարաքաստ վիճակէն խոյս տալու: Բայց ո՛չ, բնութիւնը ամէն բանէ առաջ մտահոգութեան առարկայ ունենալով Տեսակը, չուզեր որ անոնք կարենան մշտնջենապէս սերնդագործել:

Ասոնց վերապահած է անաւոր ծարաւամոլութիւնը (Dypsomanie), այն մոլի ակտը որ ալքոլացեալներէ սերեալներուն կը ներշնչէ անզուսպ և բնածին ծարաւը ալքոլին, տենջանք մը յամառ և տագնապալից՝ ալքոլ կու տալու համար: Ամենքն ալ խմել կուզեն, ամենքն ալ կը խմեն: Իրենց հայրերէն աւելի կը խմեն: Եւ եթէ դիպուածաւ զաւակներ ունենան, իրենց զաւակները ա՛լ աւելի կը խմեն, մինչև չիջումը իրենց անարգեղին:

Դժբաղդաբար միմիայն սովորեալ ալքոլամոլներուն վերապահուած չեն այս անարկու ժառանգականութիւնները. պատահաբար ալքոլացեալ՝ այն որ անցողակի անգամ մը գինովցած է՝ առանց վաղուի կրնայ քանի մը պլաստիկութեամբ ծնունդ տալու վտանգին ենթարկուիլ:

Երբեք պատահած չէ՞ք հիւանդկախ և տրկարակազմ տղաքներու որոնք երբեմն կերելին ի վարմանս ամէնուն՝ քաջաբողջ և զօրաւոր ընտանիքի մը մէջ որ իմաստուն առողջապահութեան մը շնորհիւ կրցած է անաղարտ պահել իր նախահարց երանելի ժառանգականութիւնները: Եթէ այդ ընտանիքին հօրը կամ մօրը գաղտնիքին վերահասու ըլլաք, պիտի իմանաք շատ անգամ թէ այդ տղաքը յղացուած են օր մը յորում ծնողքներէն մին, երբեմն երկուքն ալ, ԿԵՐՈՒԽՈՒԾ մը ըրած են: Ասիկայ բաւական եղած է որպէս զի ալքոլացեալ սերմնահենդանի մը երբեմն իրմէ ոչ նուազ ալքոլացեալ ձուի մը հանդուրժմէն՝ դուրս գայ էակ մը անկատար և թերի՝ չուառական գոյութեան մը սահմանուած:

Հիները այս բաները գիտէին: «Անոնք որ սերնդագործելու համար կին մը կը գգուեն,

կ'ըսէր Պլուտարքոս, անօթի ըլլալու են և մանաւանդ առանց գինի խմած ըլլալու»:

Եւ յունական ասացուած մը կ'ուսուցանէր թէ Ափրոդիտի տղաքները գեղեցիկ են, իսկ Բաքոսինները տգեղ են և ապրելու անարժան: Ինչ որ Ֆրանսայի հիւսիսային բնակիչները ինչպէս նաև Պէլճիգայիները, ուր երկու սեռէ քաղաքացիները կիրակնօրեայ չափազանցութիւններէ չեն վախճար, կը բացատրեն ըսելով թէ զգոյշ ըլլալու է կիրակիի տղաքներէն, որովհետեւ գինով վիճակի մէջ յղացուած են:

★ ★

Յետագայ առդերուն մէջ թէև Տիկին Լուիզի գրածները Ֆրանսայի համար են և իրաւամբ իր զայրոյթը չը կըրնար զսպել, սակայն մեզի համար ալ օգտակար դասեր են:

Մենք Ֆրանսայի մէջ անոնց գործածած սոսկալի Ապսէնթին(*) կը յարինք, Անգլիոյ մէջ Ուիսքիին և Ամերիկայի մէջ չեմ գիտեր անոնց ո՛ր Պրանտին կը կապուինք՝ տեղացիի հովեր առնելու և անոնց օրինակին հետեւելու համար. չատենք ալ երբ այդ երկիրներէն իրենց ծննդավայրը կը դառնան, վերոյիշեալ ըմպելիներու ներքոյը կը կարգան և զայնս կը փնտռեն իրենց յաճախած դրօսավայրերը:

Տեսնենք այժմ ինչ կ'ըսէ Տիկին Լ. Թուսէն. — «Այնպէս պիտի թուի թէ մերինին նման երկրի մը մէջ ուր ժողովուրդին թիւը չաճիր այլեւս, ուր ամէն Ֆրանսացի որ հոգածու է իր երկրին բարգաւաճման, կը հարցնէ թէ վաղը ի՞նչ պիտի ըլլանք հանդէպ դրացիներու որք անընդհատ կը մեծնան, քաջաբողջ ծնելութեան (natalité) հարցը ամէն ուրիշ խնդիրներէ նախադաս պէտք էր ըլլալ: Երբ մարդ կը մտածէ թէ՛ ամէն տարի կենաց առաջին օրերէն կամ ծնելէ առաջ իսկ հարիւր հազարաւոր տղաք կը մեռնին միմիայն անոր

(*) Ապսէնթ կոչուած ըմպելիին ո՛ր աստիճանի առողջութեան վնասակար ըլլալը բժշկական փորձերով ապացուցուած է, այնպէս որ ապսէնթականութիւնը (absinthisme) ալքոլականութենէն աւելի վտանգաւոր է:

համար որ իրենց հայրերը զանոնք յղացած ժամանակ արքայացեալներ էին, մեր առողջաբանները զբաղեցնող յուզող խնդիրներու մեծ մասը իրաւամբ շատ երկրորդական կարգէն փոքուն կ'երեւին: Եւ սակայն ոչ ոք կը խորհի լրջօրէն զբաղիլ բուժելու համար այս վէրքը որ մեր ցեղը իր սաղմին մէջ կը կրծէ և անոնք որ այդ մասին կը խօսին՝ galieriցն զուարճացնելու համար է միայն: Եթէ ատանկ չըլլար՝ պիտի տեսնուէր տակաւին արքայական մոլութեան այս գարշելի ծաւալումը որ ֆրանսական ազգին ծուծն իսկ կը թափանցէ: Հանդիսատես պիտի ըլլայինք այն տխրաշուք զաւեշտին զոր մեզի կց ներկայացնեն պաշտպանները հռչակաւոր bouillleurs de cru անուն չլիցող արքայական արհեստարարներուն: Պիտի տեսնէինք գինեւորներու այն ահագին բազմապատկութիւնը որ Ֆրանսայի ժողովուրդը գինեւորներու ժողովուրդ մը կը ցուցնէ: Այս միջոցիս Ֆրանսայի մէջ հինգ հարիւր հազարէ աւելի գինեւորն կայ: Բարիզի մէջ միայն բառասուն հազարէ աւելի գինեւորներ կան որոնք

Բարիզի հազար քիլօմէթր փողոցներու երկայնքին վրայ բաժնուած են: Հալիւ ըրէք. ամէն մէկ քսան եւ հինգ քայլին մէկ գինեւորն կ'իյնայ: Ինչպէ՞ս կ'ուզէք որ ֆրանսական ազգը առողջ ըլլայ ու բազմանայ՝ արքայամոլութեան ծաւալման այս պայմաններուն տակ»:

Վերջացնելով այս յօդուածը, պիտի խնդրեմ որ Ազգ. Վարչութիւնը եւ Ուսումնական խորհուրդը մեր բոլոր վարժարանաց մէջ առողջաբանութեան ուսումը պարտաւորիչ ընեն գէթ ապագայ սերունդը փրկելու համար: Տղան փոխանակ ըսելու թէ ես ալ երբ մեծնամ՝ հօրս պէս պիտի խմեմ եւ ծխեմ, պէտք է ըսէ, առողջաբանութեան դասերով տոգորուած, թէ ո'չ հօրս պէս պիտի ծխեմ եւ ո'չ ալ խմեմ: Եւ արդէն ո'վ գիտէ թէ ասոնց մէջ չը պիտի գտնուին այնպիսի անբաղդներ որ հակառակ իրենց բարի կամեցողութեան եւ հաստատ որոշման, չը պիտի մաքաւին իբր արքայացեալի զաւակներ: Ծարաւամուլութեան նոպաներու դէմ...:

ՏՈՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԵՐԿԱՅՈՒՂՔԻՆ ՄԵՋԵՆ

Կառախումբը կը սուրայ միշտ, հեւալէն,
Իր տիտանի գընացքովը ուրուային.
Ու ես խոհուն՝ պատուհանիս բացուածքէն
Դուրսի թովիչ պատկերներուն կը նայիմ:

Լոյսին առատ յորդաղեղումը տարտամ
Կը լուացուի կապոյտին մէջ՝ ջուրերուն,
Ուր աչքերուս ջրանոյններ կ'երեւան,
Հէքեաթներու պարիկներն այդ օրորուն:

Հարսնուկներու, մանիշակի ըրերերփնեան,
Ծիածաններ կը հրդեհուն աճնաթով...
Ու բուրում մը խենթեցընող թարմութեան
Հոգիս կ'օծէ թմբիւրի մը գգուանքով:

Ծոյլ ու հանդարտ հեշտութիւնով մը արբիւռ
Կեանքի հզօր շունչ մը կ'առնեմ ուժգնօրէն.
Երկու մաքուր կապոյտներուն մէջ անծիր
Էութեանքս աննիւթացումը դիտելէն:

Ու կը սուրայ կառախումբը տակաւին,
Իր տիտանի գընացքովը հեւալէն,
Եւ ես դուրսի պատկերներուն կը նայիմ,
Անվարագոյր պատուհանիս բացուածքէն:

Մ. Բ. ՊԱՐՍՍՍԵՆՍ

Պ Ա Տ Ի Ի Ը

Իբրև իմաստասիրական ու բարոյալից գեղեցիկ գրուածք մը՝ որ օգտակարապէս կրնայ կարգացուիլ մեր բոլոր դպրոցականներուն ու մասնաւորապէս չրջանաւարտներուն կողմէ, կը հրատարակենք Ռէթէոս Էֆ. Պէրպէրեանի կողմէ իր սաներուն ուղղուած բանախօսութիւնը, Պէրպէրեան վարժարանի ամսվերջի հանդէսին օրը։—

Սիրեցեալ ընթացաւարտ Սանունք իմ, Թէպէտեւ տրտմութիւն մը կը զգաք այժմ, բնական՝ ամէն ազնիւ հոգիներու, բաժնուելով սովորեալ վայրերէ և դէմքերէ զորս վարժուած էիք տեսնել և սիրել, սակայն գիտեմ որ քաղցր զգացում մ'ալ կը լեցնէ ձեր սիրտերը այս վայրկենիս՝ տեսնելով զձեզ առարկայ ծափերուն, գովեստիցն ու համարման հոս ժողովուած ընտիր այս ակումբին, որուն կը նախագահէ Ազգին հոգեւոր Պետը, ուր Պետութիւնը իւր ներկայացուցիչն ունի, ինչպէս նաև ընկերութեան ամէն պատուաւոր Դասեր՝ իրենց երեւցուցիչները, ի ձեռին բռնած ձեր իմացական ու բարոյական արժանեաց առհաւատչեայ ձեր այդ վկայականներն երկրորդական Կրթութեան, և այդ մրցանակներն՝ պսակ ձեր արդիւնաչափ աշխատութեան։ Այդ զգացումը Պատույ զգացումն իսկ է, իր միջավայրին մէջ իր նմանեաց, իրեն հաւասարներուն և իրմէ մեծերուն համարման և յարգանքին արժանացած ըլլալու զգացումն, որ մարդկային սրտին ազնուագոյն բնական զգացումներէն մին է, բարոյական կեանքի զօրաւոր աղդակ մը ու դրդիչ մը յառաջդիմութեան։ Այդ զգացումն արդէն իր դերն ունեցաւ ձեր դպրոցական գործունէութեան մէջ, վասն զի ի մէջ ուրիշ շարժառիթներու որք քաջութիւն տուին ձեզի ուսման դժուարութիւններուն յաղթելու, ինչպէս ապագայի մտահոգութիւնը, գիտնալու հետաքրքիր տեսչը, ճշմարտին գեղեցկագիտական հրապոյրը, նաև ոչ նուազ դրդեց զձեզ յառաջադէմ նկրտիլ

ձեր ծնողաց և ձեր ուսուցչաց համարումը գրաւելու, ձեր ընկերաց մէջ ընտրուելու և անոնցմէ յարգուելու, ձեր ընտանիքին ու ձեր դպրոցին պատուաբեր հանդիսանալու փափաքը։ Ամբողջ դպրոցական չրջանին մէջ այդ փափաքին բարի բարի արդիւնքները շօշափելէ ու վայելելէ յետոյ, ահա՝ սոնոր վերջնական գեղեցիկ պտուղը կը վայելէք դուք այսօր, պսակաւոր կանգ առած Վարժարանին սեմին վրայ, ու պատրաստ թռչելու Համայնքին ու Երկրին թեւերուն մէջ, որք իրենց ներկայացուցիչներուն միջոցաւ՝ զուարթ և յուսալից կ'ողջունեն զձեզ, հրաւիրելով զձեզ ընկերային գործունէութեան խոնամնալից ու պտղալից դաշտերուն մէջ։

Շնորհաւորելով զձեզ Պատույ այդ ազնիւ զգացման համար որով ոգեւորուեցաք ձեր ուսանողական կեանքին ու այն ընտիր արդիւնքներուն համար զոր ստացաք, պիտի փափաքէի, այս վերջին անգամ որ կը խօսիմ ձեզ, որ այդ զգացումը միշտ վառ պահէիք ձեր սրտին մէջ, որ պիտի շարունակէ զօրաւոր նեցուկ մ'ըլլալ ձեզ կեանքի ասպարէզին մէջ, վեր բռնելով զձեզ Պատույ ճամբուն վրայ և դէպ ի լաւագոյնը ձեր ձգտումները զօրացնելով։

Պատուաւոր անհատ մ'ըլլալ ընկերութեան մէջ, յարգանքի և վստահութեան արժանի, իղձ մ'է զոր ամէն առողջ հոգի պարտի ունենալ, և որ արդէն բնական յօժարութիւն մ'է մարդուն մէջ։ Ի՛նչ վայելում մ'է այդ, ի՛նչ վնասք, ի՛նչ ազնիւ հպարտութեան մ'առիթ, և ի՛նչ ոյժ։ Մարդ մ'ես դուն, քու արժանիքիդ համար արժէք ունեցող, մարդ մ'ես դուն ընտրուող մարդերու խումբ մէջ, որուն առջև ճշմարիտ մեծարանքի զգացումով մը կը խոնարհին ամէնքն, որուն կը համակրին իբրև մէկու մը որ մարդկութեան ազնիւ տիպարներէն մին է, որ մարդկային ընկերութեան մէջ ամուր միութիւն մ'է և լուրջ զօրութիւն մը յորմէ բարիք միայն կ'ափնկալուի աշխոյ համար, որուն ճակատին վրայ ո՛չ մէկ արատ կ'աղաւտէ անոր մաքուր անունը, և որ կրնայ համարձակ ու անվեհեր, ներկայանալ ամէն

տեղ, վստահ թէ ոչ ոք պիտի պահանջէ իր-
մէ խորուած իրաւունք մը, ոչ ոք պիտի յան-
դիմանէ իրեն զանց առնուած պարտք մը
այն պարտքերէն զորս իր վիճակը և իր մարդ-
էակը հանգամանքը կը հարկադրեն իր վրայ:
Ո՛չ ապաքէն միշտ նախանձախնդիր եղաւ
իր համբախն անքժութեան, ո՛չ ապաքէն
միշտ ուղիղ վարմունքով մ'ու պարկեշտ և
օգտակար դորժունէութեամբ անվթա՛ր ջա-
նաց՝ պահել ու յաւելուլ իսկ այլոց բարի հա-
մարումն իր մասին, ու յանձն առաւ զընկու՛մ-
ները, մերժեց ապօրէն շահերն ու անխոստո-
վանելի-յաջողութիւնները՝ հաւատարիմ մնա-
լու համար Պատուոյն, որպէս զի ո՛չ մէկու
մ'առջեւ ամօթով կարմիր, ո՛չ մէկու մ'առջեւ
սախպուր իր ճակատը խոնարհել ակնկոյր:
Ահա՛ պատուաւոր մարդը: Պատուոյն սէրը,
Պատուոյն մտադրութիւնը անկումներու դէմ
զգուշացուցիչ մը, խափանարար մ'է իրեն,
մանաւանդ թէ գիտէ որ անգամ մ'իւր պա-
տիւը կորուսանելէ յետոյ՝ ո՛րքան դժուարին
է վերստանալ զայն, ինչպէս կ'ըսէ բարոյա-
խօս պուէտն Պօալոյ իր սա տողերուն մէջ:

L'honneur est comme une île escarpée
et sans bords

On n'y peut plus rentrer dès qu'on
en est dehors

(Պատիւը կզդի մ'է սեպացեալ և առանց
ափունքի. մարդ չի կրնար այլ ևս հոն մըտ-
նել վերստին, անգամ մը որ դուրս մնայ
անտի): Եւ, ո՛հ, ի՛նչ ցաւագին և յուսահա-
տական է ինքզինք զրկուած զգալ իր նը-
մաններուն յարգանքէն, պատուազուրկ զգալ
ինքզինք. անձնասպանութեան շարժառիթ
մ'է ան շատ անդամ, և շատեր ալ կան,
զորս այդպիսի յուսահատութիւն մը բառնա-
լով իրենցմէ ամէն բարոյական ոյժ՝ ուղղու-
թեան ճամբուն մէջ յարստեւելու համար,
կը նետէ մղիններու և չարերու խումբին մէջ,
ընկերութեան դէմ դարձնելով զանոնք, այլ
ևս վնասակար տարրեր ու վտանգաւոր միջ-
րոպներն եղած մարդկութեան: Զի իր նման-
ներէն ինքզինք յարգուած զգալու գիտակ-
ցութիւնը բարոյական նեցուկ մ'է, և թերեւ
միակը շատերու համար որք տ'յն ատեն հա-

մարում կ'ունենան իրենց վրայ երբ այլք
համարում կը ցուցնեն իրենց, անկարող այ-
լազգ գնահատելու զիրենք, և անձին այդ
գնահատումը ո՛րքան կարեւոր է հաստատուն
քաւելու համար բարոյական կեանքին մէջ:
Պատուաւորութեան տենչը ճշմարիտ խթան
մ'է ամենուն համար. յարգանքի, գովեստի
ու հիացման առարկայ դառնալու փափաքը,
որ փառասիրութիւնն է իր բարձրագոյն ձևին
մէջ—և գիտէք որ աղնիւ փառասիրութիւն
մը երբե՛ք դատապարտելի չէ— կը մղէ դի-
մագրաւելու դժուարութեանց, առ ոտն կո-
խելու խոչ և խուժ, մինչև որ մարդ հասնի
իր նպատակին, գրաւէ իր փափաքած փայ-
լուն դիրքն ընկերութեան մէջ, կորզէ յա-
ջողութեան դափնին ու փառքի սրակը գի-
տութեան, ճարտարութեան, արուեստի, զը-
րականութեան, ուսուցչութեան, եկեղեցա-
կանութեան, աշխարհավարութեան ասպա-
րէզներէն միոյն կամ միւսին մէջ: Պատիւը,
բարի անունը անժխտելի հարստութիւն մ'է
նաեւ ընկերութեան մէջ. ա՛ն կը ծնուցանէ
վստահութիւնը, որ գործնական կեանքին
մէջ վարկ կը կոչուի և որ տ'յնքան կը նպաս-
տէ մեր ուժերը բաղմապատկելու և մեր ճի-
ղերուն արդիւնաբերութիւնը յաւելցնելու,
օգտուիլ տալով մեզ նաեւ այլոց արամադ-
րութեան տակ գտնուած արտադրիչ միջոց-
ներէն: Իսկ այդ պատուաւոր անունը ի՛նչ
պատուական ժառանգութիւն է թողու հա-
մար մեր զաւակներուն, մեր յաջորդներուն:
Չպիտի ըսեմ թէ ի չգոյէ դրամական ժա-
ռանգութեան այդ կրնայ բան մ'արժել.
ո՛չ, այլ վստահութեամբ պիտի ըսեմ թէ լա-
ւագոյն ժառանգութիւնն է այդ, և նիւթա-
կան հարստութիւնը ըլլայ կամ չըլլայ՝ կա-
րեւորագոյնն է դա. բարեհամբաւ մարդուն
զաւակները արդէն կեանքին սկզբնաւորու-
թենէն համակիր ոգիներ կը գտնեն իրենց
չուրջն՝ յօժարամիտ օժանդակելու իրենց ա-
ռաջին քայլերուն, ի յարգանս յիշատակի ի-
րենց հօր, և յետոյ՝ սա բնական խորհրդով
որ բարի մարդուն որդիք ընդհանրապէս ժա-
ռանգորդ են անոր բարոյական յատկութեանց
և յաճախ անկէ վերջ կը շարունակեն այն

առաքինութիւններն որովք հայրը փայլեցաւ իր կեանքին մէջ : Ու Պատուոյ այդ ժառանգութիւնը խթան մ'աւելի է որդւոց համար որք կըզգան անոր պարտաւորեցուցիչ հանգամանքը, ինչպէս կ'ըսէ գաղղիական առածը՝ *թէ Noblesse oblige* - «Ազնուականութիւնը կը պարտաւորէ» —, ու ժառանգեալ ճշմարիտ ազնուականութիւնն անշուշտ պատուալից յիշատակն է ծնողքներու գեղեցիկ կեանքին, որոյմէ կ'իջնէ մարդ . ազնուականութիւն որ արտաքին տիտղոսներու պէտք չունի բնաւին, և որ ժառանգութիւն թողուած գանձի դադափարին հետ ալ առնչութիւն չունի ամենեւին, վասն զի կարի բարձր է անկէ : Եւ միշտ պատուաւորութեան մի հարկեցուցիչ պայմանն է — նաեւ մի արդիւնքը անոր — որ որդին պատիւ մ'ըլլայ իր ծնողքին ու սոսկ պարտ դգայ ինքզինքը անով, ընտանիքին պսակն ու պարծանքն ըլլան զաւակները, և ուրիշ խումբերուն որոց կը պատկանի — Ազգ, Երկիր, Եկեղեցի, դպրոց, դասակարգ — պատիւ բերէ, ու պատիւն յաւելու մարդ իր արժանիքովն ու արդիւնքովը : Ընկերութեան կողմէ վայելուած համակրութեան ա՛յնպիսի բարոյական արժէք մը կ'ընծայէր Սկոտլանդի իմաստասէրն Ատամ Սմիթ որ, ինչպէս գիտէք, անոր վրայ նո՛յն իսկ բարոյական դրութիւն մը կը հիմնէր, — համակրութեան բարոյականը — դա՛յն համարելով միակ և պայծառ ստուգանիչ անհատին բարոյականութեան ու գործերու ընտրութեան մէջ ալ բարւոյն ու պարտականութեան ապահով ուղեցոյց :

Բայց մենք չպիտի երթանք ա՛յդքան հեռուն . ընկերական համակրութիւնը ոչ թէ պատճառն է գործերու բարութեան, այլ անոր արդիւնքն է . կը համակրինք գործողի մը, վասնզի բարի՝ է անոր գործը, բարի՛ են սկզբունքներն որոնցմէ կը ներշնչուի ան իր վարմունքին մէջ, և այսպէս իր բարոյական գործն ու սկզբունքներն են որք կը բռնադատեն համակրութիւնը, այլապէս՝ արդիւնքը պատճառին տեղ առնելու իմաստակութիւնն ըրած պիտի ըլլայինք : Մեր նմաններուն համակրութիւնը գեղեցիկ վար-

ձառութիւն մը և զօրաւոր ներշնչիչ մ'է մեզ բարւոյն համար, վասն զի ընկերութիւնը ընդհանրապէս անաչառ գիտենք՝ այն հեռավորութեան մէջ ուրկէ կը դատէ, և վասն զի գիտենք նաեւ որ ո՛րքան մարդիկ իրենց անձին վրայ իրենց դատաստաններուն մէջ ներող ըլլան առ անձն բնական տկարութեամբ մը, այնքան խստադատ են՝ երբ խնդիրը ուրիշներ դատելու վրայ ըլլայ, եւ դժուարաւ կը հաւանին տալ ուրիշներուն իրենց գովեստն ու հաւանութիւնը . ամէնէն մոլին բժախնդիր մըն է այլոց արարքին, եւ Յիսուսի օրերէն մինչեւ այսօր ալ շատեր իրենց եղբօր աչքին չիւղը կը տեսնեն՝ առանց տեսնելու գերանը որ իրենց աչքին մէջն է : Այսպէս դժուարին է ընդհանրապէս այլոց բարի համարմանն ու յարգանքին արժանանալ, որով եւ արժանանալն իրաւամբ կրնայ գգուել մեր խիղճը եւ անոր փափաքը՝ մեր բնութեան ազնիւ մէկ դրդումը համարուի : Բայց ընկերութեան բաղադրութիւնը ամենուրեք նոյնը չէ . հոս կամ հոն, կրնայ ըլլալ որ հասարակութիւն մը ըլլայ աւելի կամ նուազ ապականեալ, աւելի կամ նուազ նախապաշարեալ . ճշմարիտ բարին իմանալու մասին աւելի կամ նուազ տհաս : Այդպիսի վիճակ մը ի հարկէ պիտի դիւրէ անոր բարոյական դատաստանը : Շամֆորը կը հարցնէր «Ո՞րչափ տիմարներ պէտք են հասարակութիւն մը կազմելու համար» եւ կ'աւելցնէր «Այն եղանակը, որով գովեստն ու պարսաւը բաշխուած կը տեսնեմ՝ ամէնէն պարկեշտ մարդուն վաստահամբաւ ըլլալու բաղձանքը պիտի տար»

(*) . — Jules Payot, Cours de Morale երես 106 .

վերագրէ բոլոր այն չարաշահութիւնքն ու խարդախութիւններն որոնցմով ապականուած է այսօր առեւտրական աշխարհը: Տեսականապէս ուսուցողած դասերը՝ անձնագործութեան, լազնուութեան, տաղանդին պարտ ու պատշաճ յարգութեան, գերամաքուր կեանքի մը գեղեցկութեան մասին՝ չափ չուտով կը չէզոքացուն փորձառութենէն. փարթամութեան մատուցուած մեծարանքը զամէնքը կը մղէ չահելու և հարստութիւն գիգելու առանց երբեք նայելու միջոցներուն որակին, ամենէն անպարկեշտներն ալ ըլլան անոնք: «Եթէ, կ'ըսէ, չարագործ հարուստը, յետ տաճարին մէջ մօիկ ընելու քարոզի մը որ մատնանիջ կը դատապարտէ այն անպարկեշտութիւնները որովք յանցաւոր է ինք, եկեղեցւոյն դուռը կը դանէ իր՝ դրացիներն որք գլխարկներն կը հանեն իրեն առջև, միթէ այդ լուելայն հաւանութիւնը կարող չէ՞ ջնջելու իր բոլոր լսածներուն ազդեցութիւնը»: Այսպէս մոլորուած հասարակաց դատաստան մը, ապականուած հանրային կարծիք մը կրնայ մոլորութեան պատճառ ըլլալ ուրիշներուն համար, աշխարհի սեմէն իրենց ոտքը ներս դնող դեռահասներուն համար մանաւանդ, որք հանրային համարման ու համակրութեան արժանանալու անկեղծ և օրինաւոր փափաքովն են ոգեւորուած:

Բայց չէ, դուք այսպէս չպիտի խորհիք: Դուք պիտի ուղէք միջավայրին մէջ, ուր պիտի ապրիք, հանրային յարգանաց և համակրութեան արժանանալ ուղիղ ու պարկեշտ վարմունքով մը, խղճամիտ ծառայութեամբք, առանց բնաւ եղծանելու ձեր բարոյական արժանապատուութիւնը: Դուք գիտէք նաեւ ընկերութեան անկատարութիւնը, հանրային բարոյականին տկարութիւնները, դուք որ հաճոյքի ու շահու ընթացիկ բարոյականներուն թերութիւններն ուսումնասիրած էք ու անոնց տգեղութիւնն ըմբռնած, դուք որ մարդկային արժանապատուութեան վրայ ա'յնքան բարձր գաղափար ունիք և գիտէք թէ պարտքն է չնուստատնալ, չխնալ ձեր բանաւոր ու ազատակամ էակին բարձ-

րութենէն և ուղղել ձեր բոլոր ուժերը, ձեր բոլոր գործունէութիւնը դէպ յիրացումն ձեր մէջ և ձեր շուրջը մարդկային անձի իտէալին որու տարերքն են անկախ նկարագիր, մաքուր խիղճ, ճշմարտասէր, բարեացակամ ու գեղատենջ հոգի:

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

(Շարունակելի)

ՀԱՐԱՍԱՆԻՔ

Երկուշաբթի օրը, Սկիւտարի Ս. Կարապետ եկեղեցին, ընտանեկան շրջանակի մէջ, տեղի ունեցաւ՝ ծանօթ հրապարակագիր Լեւոն էֆ. Քիրիշեանի քրոջ՝ Օր. Հայկանոյ Քիրիշեանի պատկազրութիւնը Դալուստ էֆ. Մանուէլեանի հետ, կնքահայրութեամբ Արշակ էֆ. Գէորգեանի: Հանդէսին կը նախագահէր Տ. Ներսէս Ծ. վրդ. Դանիէլեան որ գեղեցիկ յորդորական մը խօսեցաւ: Պրսակի արարողութենէն ետքը, նորապսակ ամուլը առաջնորդուեցաւ Մանուէլեանց բնակարանը ուր պատուասիրութիւնք եղան ու շնորհաւորութիւններ ուղղուեցան:

«Լ. ԷՈՆԵՊԻՆՍ»

Ստացանք՝ Յովհաննէս էֆ. Ս. Թօփալեանի հեղինակած Leontina անուն երաժշտական հատուածը որ գեղարուեստական շրջանակներու մէջ գնահատուած աշխատասիրութիւն մըն է: Երիտասարդ արուեստագէտին այս Բօլքան, յատկապէս դաշնակի համար պատրաստուած, զուարթ ու հեշտալուր եղանակ մըն է, պարանցիկ երեկոյթներու մէջ մեծ ընդունելութիւն գտնելու սահմանուած: Յակոբ էֆ. Ճեմէլէկեանի հեղինակած «Շանս—Բօլքա»ին հետ՝ այս երկրորդ ձայնատետրն է զոր կ'ընդունինք մէկ ամսուան միջոցի մէջ, ինչ որ ցոյց կուտայ գեղարուեստական հակում ունեցող մեր երիտասարդներուն յաջողութիւնը իրենց ասպարէզին մէջ:

ԱՆՔՈՒԱՍՈՒՆՈՒԹԻՒՆԸ

Մարդկութեան ծոցին մէջ իր վկասակար գոյութեամբ ծանօթ ախտ մը՝ որուն դէմ ամէն ուղղի ընկերաբաններ, գիտուններ, մարդասէրներ բուն պայքար մը կը մղեն։

Յաջողութեամբ պիտի պսակուին այն գեղեցիկ ջանքերը որոնք կ'ըլլան շարունակ, ընկերային այդ կործանարար չարիքը եթէ ոչ բոլորովին բաժնալու՝ գէթ ամօքելու համար։—Յոռետեսներ յօնքերնին կը պոստեն, սկեպտիկներ բացասական դառն ծիծաղով մը կը պատասխանեն և լաւատեսութեան անխոնջ կուսակիցներն են միայն որ խորունկ հաւատքը ունին անոր վերջնական յաղթանակին։

—Տիկին Պիլըր Սթօուի La Case de l'oncle Tomին(*) տարած փայլուն յաջողութեան պարագան միթէ կարելի՞ էր մոռցուիլ, կ'ըսեն այս երջանիկ մահկանացուները—և իրաւամբ։ Չգիտցող կա՞յ թէ այդ պատուական վէպին շնորհիւ էր որ գերեվաճառութեան պէս նողկալի commerce մը իր վերջը գտաւ։

Խօսքին, գիրին, մեղանին ունեցած մեծ ազդեցութիւնն ու կարեւորութիւնը կ'ուզէի չեղտել այս օրինակով։ Մարդ որչափ ալ թերահաւատ ըլլայ այս մասին, անուրանալի է թէ այդ ազդեցութիւնը աստիճանաբար իր օգտակար ու բարեբար հետեւանքները պիտի ունենայ։

Այսօր հաստատուած իրողութիւն մըն է թէ—և այս մասին վիճակագրութիւններու եայլն դիմելու հարկ չկայ—ալքոլամոլութիւնը մի միայն մեր խոնարհ դասակարգը ներկայացնող հատուածին մէջ չէ՝ որ իր աւերները կը դործէ։ Սովորութեամբ կոմ քեյֆի համար, և կոմ նիւթական պայմաններու անձկութիւնէ յառաջ եկած դժգոհութեամբ և յարակից ուրիշ նմանօրինակ պատճառներով, ընտանիքի հայրեր, եղբայրներ, անձնատուր եղած են ու կ'ըլլան այդ չարաշուք մոլութեան։ Արեւցողի զաղրելի պատկեր մը

Ծ. Խ.—Մեր տղայութեան օրերուն սիրական ընթերցման գիրքը, Աղբաւ Թոմասը։

հիւսելու պէտք կա՞յ անպատճառ, հաստատելու համար այն մեծ կորուստը որ յառաջ կուգայ այդ մոլորանքին ենթարկուողին հաշտոյն—նիւթական, բարոյական ու ֆիզիքական երբեակ տեսակէտով։

Գիտունի, բարոյախօսի, ընկերաբանի ծիծաղելի հովեր ա'լ առնելու պէտք չկայ անպատճառ, այս ցաւալի պարագան մատնանչելով անոր դարմաններ առաջարկելու համար։ Ալքոլը չի մեռնիր ըսելը չի բաւեր անշուշտ։ Ալքոլամոլութեան պէս աղէտի մը՝ մեր համայնքին մէջ ծաւալուած եթէ ոչ բոլորովին արգիւելու՝ այլ գէթ սահմանափակելու դիտումով Տիար Թաւշանճանի գովելի տրամադրութիւնները՝ հարուստի զրօսանք բառերով որակելն ալ ներելի չէ։ Եւ ասիկա անո'ր համար որ, իր լուրջ վաճառականի ու բարեսէր մեկենասի կրկնակ հանգամանքներով ծանօթ անձնաւորութիւն մը—ո'վ որ ալ ըլլար—երբեք չպիտի մտածէր կարծեմ այնքան անձուկ ու ծիծաղելի զրօսանք մը ունենալ, մինչև թեթեւ քմահաճոյքի մը զոհելու չափ՝ իր մասին կաղմուած նպաստաւոր տպաւորութիւնները։

Ի՞նչ հարկ սակայն այս հայեցողութեան վրայ ծանրանալու։ Խնդիրը հո'ն է թէ արեւցողութեան դէմ մաքառելու բաւելի միջոցները ունի՞նք և թէ՛ ի՞նչ պայմաններ պիտի աւելի նպաստաւորէին այն օգտաշատ ձեռնարկը որուն հոգեւին փարած կը թուի Նիւ-Եօրքաքնակ յարգելի վաճառականը։

Եթէ չեմ սխալիր, ցարդ Պարսկահայ և կովկասահայ հակալքոյական մարմիններու տեղեկագրերէն և յարակից աշխատասիրութիւններէն զատ ուրիշ ու է լուրջ հեղինակութիւն չէ երեւցած մեր մէջ։ Լրագրական էջերու մէջ հրատարակուած ու հրատարակելի գրութիւններ այս մասին տարակոյս չկայ թէ իրենց օգուտը կ'ունենան. բայց այդ օգտակարութիւնը գոհացուցիչ համեմատութիւններ ա'յն ատեն պիտի կրնար առնել՝ եթէ յիշեալ բոլոր յօդուածներն ալ գրքի ձևով հրապարակ հանուէին վերջ ի վերջոյ և համեստ գումարի մը փոխարէն վաճառուէին—աղքատներուն ձրի տրուելու պայմանով։

Անհատի մը — ու նոյն իսկ համայնքի մը — վրայ ներգործիչ հանգամանք ունեցող միջոցներէն մէկն է ԵՍՊԱՆՈՐՈՒՅԻՆԵՐ: Ո՛րչափ աշխատուի դայն ազդեցիկ, համոզիչ ու խորունկ դարձնել, ա՛յնքան արդիւնքը փայլուն կ'ըլլայ: Եթէ լրագրական որ և է յօդուած որ աւքոյնի զոհերուն — յաճախ տխմար, ապուշ, կամքէ, կորուլէ զուրկ անբանացած արարածներ — մասին խօսած ատեն՝ ընթերցողին վրայ վայրկենական տխուր ու կարեկցախառն ազդեցութիւն մը կը թողու, կըրուած այդ տպաւորութիւնը սարսափից ու ցաւազին զգայութիւններու չպիտի փոխուէր եթէ անոր ձեռքը ըլլային խորհրդատու և հակամոլ գրքոյքներ որոնք իւրաքանչիւր էջի մէջ ուրոյն պատկերներ ու վիճակներ պիտի ներկայացնէին իր աչքին:

Ես այն — հոգ չէ թէ լաւատես — համոզումը ունիմ որ ընտանիքի մայրեր, քոյրեր և եղբայրներ ալ իրենց օժանդակութեան բաժինը կրնան բերել իրենց յարկին տակ հանդուրժուող... անհանդուրժելի խմաններու զգաստութեան դործին, կը բաւէ որ այդ բանին համար անայլայլ յարատեւութիւն ու տեւական համբերութիւն ցոյց տան, տան ներքին կեանքը հրապուրիչ դարձնելով, ամէնէն քաղցր ու համոզկեր «լեզուները թափելով» իրենց մարդուն գլխին և անոր ըմպելիքին քանակը նուազեցնելու հանճարիկ միջոցներ որոնելով — ո՛չ թէ քաջալերելով — միջոցներ, որոնք, կարծեմ, իգական սեռին յատուկ առաւելութիւններու սահմանէն դուրս չեն:

Իսկ անոնք որ դուրսը կը ճնկն — ժողովրդային բացատրութիւն մը գործածած ըլլալու համար, ինչ որ Խիւսամբիուքիւն իսկ է — անա ամէնէն ողբալիները: Հոս ալ մեր մայրերուն ու տան բարեկամներուն կոչում պիտի ընեմ, պատշաճութեան ներած չափով հետապնդելու համար իրենց ամուսիններուն, մտերիմներուն կամ զաւկներուն: Հակալքութեան զրուածքներու ընթերցանութիւնը մէկ կողմէն, կնոջ կամ բարեկամի անդադրում հսկողութիւնը միւս կողմէն, կարծեմ թէ բոլորովին անօգուտ չպիտի դառնային:

Ու յետոյ, ձեռնարկին զգալապէս պիտի օգնէին նաեւ՝ եկեղեցիի, վարժարանի բնամերէն ալքումովութեան դէմ ժողովրդական զիւրահասկնալի լեզուով եղած խրատական քարոզներն ու բանաստեղծութիւնները:

Շատերու աչքին՝ այս միջոցները գուցէ իրենց պարզութեան համար տնքաւական նշկատուին: Բայց աւելցնեմ որ, ալքումովութեան պէս գարշելի սովորամոլութիւն մը արմատախիլ ընելու չափ զօրաւոր չեմ հրաշակեր ես արդէն՝ այս պայմանները, եթէ ասոնք առ առաւելն 5% եւ առնուազն 10% համեմատութեամբ գէթ օգտակար, փրկարար ազդեցութիւն մը ընեն ալքումներու բաւական մեծ թիւին վրայ, եթէ իրերահայեցութեամբ, ջանադրութեամբ, փորձով՝ խըմաններէն ոմանք ձգտին, աշխատին նուազեցնելու զիրենք փոխանակ սփոփելու՝ ա՛լ աւելի դառնացնող այդ ըմպելիքին չափը, եթէ նորահաս սերունդը ինքզինքը հակալքութեան ըմբռնումներու, գաղափարներու պատրաստ գետինի մը վրայ գտնէ վերջապէս, ինքն ալ իր կողմէն ոյժ տալու համար մղուած ազնիւ ու մարդասիրիկ պայքարին, տարակոյս չկայ թէ սրտապնդիչ արդիւնքներ միայն կրնան ըլլալ քաղուելիքները, որոնք, հակառակ աղւոր երազի մը տպաւորութիւնը թողնելուն, իրականանալէ հետո՛ւ հաւանաւորութիւններ ալ չեն բարեբախտաբար:

Քիչ քիչ սա՛ գաղափարը ամէնէն աւելի կըսպառնայ ընդհանրանալ մեր ընկերային խաւերուն — և անչուքներուն — մէջ մանաւանդ թէ օղին, գինին, ապսէնթը և յլն. մէկ խօսքով՝ ալքովը կը մխիթարէ ու կը նորոգէ գործի մարդն և անոր ոյժերը. թէ, արդէն դժբախտութեան և թշուառութեան մէջ տուայտող աշխատաւոր մը պէ՛տք ունի անոր անպատճառ՝ ինքնամոռացութեան մէկ երկու մասեր անցընելու համար: Ամէնէն անհաշտ հայեացքներով չէ՛ որ կուգեմ վերաբերուիլ այդ միակողմանի տեսութեան: Անձնական վիշտերը — հոգ չէ թէ ինքնախաբօրէն կամ կարճատեւօրէն — մոռացումի մատնելու պարագան ամենուս ծանօթ հոգեկան տրամադրութիւն մըն է: Հարուստ, զիւրակե-

ՕՐՈՒԱՆ ՆՕԹԵՐ

ԳՊՐՈՑԱԿԱՆ ՄՐՑԱՆԵՆԿ

Մեր օրաթերթերը կը շարունակեն հրատարակել ազգ. վարժարաններու ամսվերջի և վկայականներու բաշխման հանդէսի նկարագրութիւնները, օրը օրին և ընդարձակօրէն: Դժբաղդաբար, շատ քիչ տրամադրելի տեղ կը մնայ Մասիսին՝ անոնց գէթ ամփոփոյքն ընելու համար որոնք դարձեալ բաւական էջերու կը կարօտին. մնաց որ, արդէն իսկ գրուածներուն կրկնութիւնը պիտի ըլլային: Անցողաբար յիշենք, թէ վերջին եօթնեակին մէջ կատարուեցան Բերայի, Մաքրիգիւղի և Սամաթիոյ երկսեռ վարժարաններուն հանդէսները որոնց իւրաքանչիւրին անձամբ նախագահեց Ս. Պաթրիարքը: Այդ երեք կրթական հաստատութիւններն ալ, իրենց սահմանին մէջ, յաջող արդիւնքներ ցուցադրեցին որոնք գոհունակութեամբ ողջունուեցան: Նոյնպէս Պէրպէրեան վարժարանը որ այս տարի բոլորեց իր հաստատման 29րդ տարեշրջանը և ընծայեց 16 ընթացաւարտներ: Բայց եթէ հանդէսներով չպիտի զբաղինք, կ'արժէ սակայն կանգ առնել անոնց հետ անմիջական առնչութիւն ունեցող պարագայի մը առջև, նոյնչափ օգտակար որչափ նոր իր տեսակին մէջ: Այդ նորութիւնն է, բարեյիշատակ Յակոբ փաշայի կրթասէր եղբոր՝ Նշան էֆ. Գաղաղեանի հաստատած դրամական մրցանակը, Պէրպէրեան վարժարանի յառաջադէմ սաններուն համար, որով զանազան առարկաներ կամ գիրքեր կը նուիրուին անոնց: Պէրպէրեան էֆ., իր կարգացած տեղեկագրին մէջ, գեղեցկապէս կը բացատրէ այս մրցանակը: Յօսքը իրեն թողունք ուրեմն. --

«Ինչպէս գիտէք, ունինք նաև մի այլ մրցանակաւարտութիւն — Գաղաղեանը: Ուրախ եմ ծանուցանելու որ Վսեմ. Նշան էֆ. Գաղաղեան, իր անցեալ ամի խոստման համեմատ, 10էն 20 ոսկւոյ բարձրացուց ի յիշատակ իւր եղբոր՝ վաղամեռ կարապետ էֆ. Գաղաղեանի և յանուն Պէրպէրեան Սանուց հաստատած մրցանակի գումարը: Շնորհիւ

սոյն յաւելման, փոխանակ ի՞նչ 10 մրցանակներ պիտի տրուին այս ամ, իւրաքանչիւրն 2 օսմ. ոսկւոյ արժէքով, և բաց ի թուրքերէն, Հայերէն և Ֆրանսերէն լեզուաց և ուսողական և բնական գիտութեանց մրցանակներէ (հայերէնի մրցանակը այս տարին սկսեալ միայն գրաբարի կը վերապահենք) պիտի ունենանք Խմաստասիրութեան, Անգլիերէնի, Գերմաներէնի, Առեւտրական Ուսմանց, Գեղարուեստի և Մարմնամարզի մրցանակներ: Հրապարակաւ կը յայտնեմ աւտ, և այս ամսս, խորին շնորհակալութիւններս Վսեմ. Նշան էֆ. Գաղաղեանի՝ վարժարանիս նկատմամբ իր ունեցած համակրութեանն ու վստահութեանն համար, և Սանուցս հետ մեր օրհնութիւնները կը ձօնենք իր Հարազատին նուիրական յիշատակին»:

Օրինակը գեղեցիկ է և մեծապէս քաջալերիչ՝ դպրոցական սաններուն համար որոնք ամբողջ տարին աշխատութեան կողմէ պիտի մրցին գերազանցել զիրար, այս կամ այն ուսման կամ լեզուի մէջ առաջին հանդիսանալու և արժէքաւոր մրցանակ մը ստանալու համար:

Արդէն, մրցանակներու շրջանի մը մէջ կը գտնուինք, և թէպէտ record կը մնայ միշտ թաւշանձեան — Մրցանակին, թէ՛ քանակի կարեւորութեան և թէ՛ որակի եղականութեան տեսակէտներով, այսու հանդերձ շատ գնահատելի մտածման մը արդիւնք է Գաղաղեան — Մրցանակն ալ, դպրոցներու համար, որ երանի՜ թէ իր հետեւողներն ունենայ:

ԿՏԱՆ ՄԷ

Թիֆլիզի հարուստ ազգայիններէն Պ. Սողոմոն Ալեքսանտր Պապանասով, որ մէկ — երկու շաբաթ առաջ մեռած էր, կտակ մը թողուցած է որով 80,000 ռուպլի արժողութեամբ տուն մը կը նուիրէ քաղքին երկրորդ գիմնաղիւթին, պայմանաւ որ անոր հասոյթով ուսում ստանան աղքատ հայ տղաք: Նոյնպէս, բաւական կարեւոր գումարներ կը տակամ է՝ կրթական և բարեսիրական մարմիններու և անչափահաս տղոց պաշտպանութեան համար:

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏ

Երկուշաբթի օրը, Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցիին մէջ հանդիսաւորապէս տեղի ունեցաւ Զգօն էֆ. Խորասանճեանի պատկազրութիւնը՝ Օր. Հայկունի Շամտանճեանի հետ, դուստր Յեսու էֆ. Շամտանճեանի, կնքահայրութեամբ փեսին հօրեղբօր՝ Խաչիկ էֆ. Խորասանճեանի: Երկուսն հրաւիրեալներու ընտրեալ բազմութիւն մը, գլխաւորաբար Բերայէն ու Գատըգիւղէն, լեցուցած էր եկեղեցին:

Արարողութեանց կը նախագահէր Ս. Պատրիարք Հայրը՝ իր շուրջն ունենալով Տ. Գէորգ եպիսկ. Երէցեան, վարդապետներ ու քահանայական դասը: Պատկի արարողութեան աւարտումէն ետքը, Ն. Ամենապատուութիւնը գեղեցիկ քարոզ մը խօսեցաւ՝ ընտանեկան յարկի նուիրականութեան վրայ, յորդորելով նորապսակ ամուլ մնալ միշտ այն սիրոյն մէջ որով հիմը կը դնեն իրենց միութեան. «Ես այն հաւատքն ունիմ որ, ըսաւ Ս. Պատրիարքը, դուք երկուքդ ալ պիտի կրնաք ամուր պահել այդ սէրը, որովհետեւ գիտեմ թէ ձեր երկուքին ալ գերդաստանները տիպար դաստիարակութեան մը հետ ազնիւ զգացումներ ջամբած են ձեզի»: Օրհնալիւր շնորհաւորութիւններով վերջացաւ Պատրիարքական քարոզը, որմէ վերջ՝ ներկաներն հրաւիրուեցան Սբաւորաբար հիւրասրահը ուր ճոխ շքասեղանի մը շուրջ՝ խնդակցութիւններ ուղղուեցան. նորապսակ ամուլին որոնք միեւնոյն ատեն կըստանային շնորհաւորական բազմութիւ հեռագիրներ հեռարձակ ազգականներու և բարեկամներու կողմէ: Ժանրազին նուէրներ ու շքեղ ծաղկեփունջեր զրկուած էին շնորհալի հարսին: Շամտանճեան և Խորասանճեան ընտանեաց անդամները, իրենց ծանօթ կենցաղագիտութեամբ, մեծուրեցին հարսնեւորները, և սարեր ալ տեղի ունեցան՝ ընտիր նուագածութեան մը ընկերակցութեամբ, մինչև իրիկուն:

* * Այս ամուսնութեան առթիւ, բարեգործութիւնն ալ իր բաժինը ունեցաւ, կի-

րակի օրը Ազգ. Հիւանդանոցի պատասպարեալներուն ընդհանուր սեղան մը տրուելով որուն համար, յատկապէս, Զնական օսմ. ոսկի նուիրած էին, հարսին հայրը՝ Յեսու էֆ. և փեսան՝ Զգօն էֆ.: Նոյնպէս, ազգականներու և բարեկամներու կողմէ դրամական նուիրատուութիւններ եղան Հիւանդանոցին, փոխան ծաղկեփունջի:

ՀԱՅՈՒՆԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ ԱՏԱԲԱՋԱՐ

Այս վարժարանը, զոր կը վարեն ինը անդամներէ բաղկացած Խնամակալութիւն մը, և բնիկ ու Ամերիկացի 11 ուսուցիչներէ կազմուած ձեռնհաս ուսուցչական խումբ մը, հիմնական դաստիարակութիւն մը կուտայ բոլոր իրեն գլխաւոր հայ աղջիկներուն: Կ'աւանդուին բնական, իմաստասիրական, շահական և այլ գիտութիւններ: Մասնաւոր ոյժ կը տրուի հայերէն և անգլ. լեզուներուն. կուսուցուին նաև թուրքերէն և ֆրանսերէն լեզուները: Վարժարանին երկու ընդարձակ և օդաւետ շէնքերը, ինչպէս նաև Խնամակալութեան երկու բժիշկ անդամները մեծապէս կ'ապահովեն աշակերտուհիներուն առողջութիւնը: Անատուլի Երկաթուղին, որուն մէկ մասնագիծը մինչև քաղաքս կ'երկարի, ճամբորդութիւնը խիստ զիւրիւն և հաճելի կ'ընծայէ: Գիշերօթիկներու տարեթոշակն է 12 օսմ. ոսկի, զոր երկու մասնաւճարով պէտք է հատուցանել: Դպիսակի դասի համար 5. կամ 3 ոսկի կը պահանջուի, դասառութեան թիւին համեմատ: Երգեսօնի դասի համար 2 ոսկի. ոսկի կը պահանջուի: Վարժարանին ԻԱ. տարեշրջանը կըսկսի Սեպտ. 13 (Ն. Տ.) չորեքշաբթի իրիկունը: Վարժարանին նոր յայտագիրը ուղղուեալն ձրի կը զրկուի:


Աւելի տեղեկութեանց համար դիմել Մր. Բիթի, Պայպլ Հաուս Կ. Պոլիս, կամ գրել Տոքթ. Ս. էֆ. Գալվաճեանի, ատենապետ Խնամակալութեան, Ատաբաղար:

Հիմնադիր—Կ. Ս. Իիթիիճեան

Տէր եւ Տնօրէն—ՏՈՒԹ. ԵՂՈՒԱՐԴ ՄԱՍԻՍ

Տպագրութիւն ԵՐԵՒԱՆԻ Օրագրի

LA CONFIANCE



ԼԱ. ՔՕՆՖԻԱՆՍ

ԿԵՆԱՅ ԱՊՍՀՈՎԳ. ԸՆԿ.

Հիմնադրվել է 1875 թ. ինչպես ուղղակի ճրանգ. կառավարության հսկողության ներքին ճանաչողական ապահովող. 339 ՄԻԼԻՈՆ Ֆր. Իրամագլուխ եւ պահեստ 38 ՄԻԼԻՈՆ Ֆր. Ընդ. գործակալ Պոլսոյ եւ գաւառացի ԱՐՍՄ Ս. ԳԱԼՅԱՆԱՆ.

Պոլս, Հանգրույո խան Եօ. 53
Գաւառները պատուաւոր. գործակալներ կը փնտռուին : 20—50

ՆԱԶԱՐԵԹ ԽԱՉԻՐԵԱՆ

Փ. Ս. Ս. Ա. Ս. Ն.

Պոլս, Մարբուհնուր. Պահարան խան Թիւ 26

Ամէն կարգի դատար կը ստանանք եւ խնդրոյ առարկայ եղած գործերու համար թէ՛ բերանացի եւ թէ՛ թղթակցութեամբ բանակցութիւններ կը կատարէ եւ կարծիք կը յայտնէ. կը խմբագրէ եւ կը թարգմանէ դատար եւ առեւտրական ու արհեստական պայմանագրութեանց վերաբերող թուղթեր :

Ուրբաթ օրերը եւս մինչեւ կէս օր ձիաբար խորհրդակցութիւն կը կատարէ եւ կարծիք կը յայտնէ :

Օտմ. անօնիմ բնկերութեանց ընդհանուր ժողովոց մէջ բաժնետէրերը առանց վարձի կը ներկայանան :

Ապահովագրական գործառնութիւններու եւ ի մասնաւորի կեանքի ապահովագրական բնկերութեանց նկատմամբ անհրաժեշտ եղող անդհակաթիւնները ձիաբար կուտայ. եւ կը յանձնարարէ որ մինչեւ որ այս մասին կտրուոր եղած անդհակաթիւնները իրմէ չտանցուին, ապահովագրութիւն չի ստորագրուի : Ապահովագրական վնասուց հասուցման գումարներու եւ փոխարժէքներու գանձումը եւս կը ստանանք :

Իսկ վարձքի մասին դիւրութիւն եւ անհրաժեշտ կ'ընծայէ : 9—40

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ


Փ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐՍ., ՄԵԾ ՓՈՂՈՅ ԹԻՒ 200

Կալածա-Սէրայի Լիսէին դէմ
ԳԵ. ԵՇ. ՇՐ. օրերը առաւօտեան կանուխէն մինչեւ իրիկուան ժ. 11 1/2
ԲԵ. ԳԵ. ՈՒՐ. օրերը 6էն մինչեւ 11 1/2
Երակի օրերը ժամադրութեամբ 8—10

PHOENIX ASSURANCE L Co.

“ՖԻՆԻՔՍ”



Հիմնադրվել է 1782 թ. ինչպես ԳՐԻՄԷ Ի ՊՈԼԻՍ 1869 թ. Ի ՎԵՐ

ՈՂՈՂ. Պ. Ա. Լ. Լ. Լ. Լ. ԱՆ ԸՆԿ.

Իրամագլուխ եւ պահեստի դրամ

Ունդ. ոսկի 4,218,000

Ֆինիքս ըստ կարգի դէմ Ապահովագրական բնկերութիւն մըն է. ծանօթ իր պատուաւորութեամբ եւ վնասուց մէջ իր անմիջական վճարումներով :

Ֆինիքս կ'ապահովագրէ կարգի եւ կայմակի դէմ ամէն տեսակ անշարժ եւ շարժուն առարկանք, յորժ նպատակաւ պայմաններով :

Ընկերութեան նշանաբանն եղած է.

ՈՒՂՂԱՄՏՈՒԹԻՒՆ եւ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ՎՆԱՍՈՒՑ. Ցաւոք վնասած է առաւել քան 27,000,000 անդլ. ոսկի :

Ընդհ. գործակալ Պոլսոյ եւ գաւառացի. ՎԱՐԴԱՆԵԱՆ

Վերայիս խան, Պանգ Օրօմանի ֆոյ Ղալաքիա :

Փոխ գործակալք ի Պոլս

ՌՈՒՐ. ԱԲԻԿԵԱՆ ՃԻՎԱՆ ԹԵՔԷԱՆ
Էմին պէյ խան Ֆնսղիան խան

Չնիկ, Երզնքու
10—10 Ա. ԷՆՔՍԷՐՃԵԱՆ

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՁ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Ճ Ի Ի Ղ

Մինչեւ 1902ի վերջը հատուցեալ վնասք	274,000,000	Փր.
1902ին գանձուած ապահովագրին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

Կ Ե Ն Ա Ց Ճ Ի Ի Ղ

Մինչեւ 1902ի վերջը հատուցեալ վնասք	129,000,000	Փր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագրին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայեն հսկայեալ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼԻՔԻ ՄԷՁ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեալ գինեով: Նպաստաւոր պայ- պաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան մայմանները: Շահառաքիններու տարուէ տարի անհրաժեշտ վճարում, որով Իւնիոնի ապահովագրուողք ՉԵՐԾ են այն վնասներէն եւ լուսան սեռութիւններէն, որոնց կենթարկուին միշտ ան անհինք, որ շահաբաժիններու բաւական (accumulation d'es bônâces) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դրութեամբ գործող ընկերութեանց կ'ապա- հովագրուին:

Ընկերութեան դրամատունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելի Տնօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համամ, Բասաժ Բաքրեք Օղլու

Մասնաճիւղ՝ Ղալաթիա, Լիայէթ Պան:—Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքացի մէջ

1—10

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (Ի ՎԻԵՆՆԱ)

ՊԱՏՈՒԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ. ԳՈՒՐԾ ՂՈՒԻ ՏԸ ՊԱՎԻԹ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. Ընկ. ընդդէմ հրդեհի եւ ծովային վնասներու (Ի ՄԱՏՐԻՏ)

Ապահովագրութիւնք կը կատարուին լաւագոյն պայմաններով:

Սոյն ընկերութեանց Դրամաւունն է Ի Կ. Պոլիս, Բուքսի Լիօնի

Ընդհ. եւ լիազօր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՅԵԱՆ

Գրասենեակ, Պոլիս, Ալեքսիա իւմի,

1—10

ՍԶԴՈՒ ՄԻՋՍՏՍՄՊՍՆ ՓՈՇԻ ՓՆՏՈՂՆԵՐՈՒՆ ԿԱՐԵՒՈՐԱԶԴ ՄԸ



Կ'ուզե՞ք հաճգիս ու մրցիկ-մրցիկ ֆնանալ ու ազատի
սալաներես միջասեռուց սուած շարժանգներէն. ԴԻՍԵՅԷ-Բ
ՈՒՂԱԿԻ

ԽԱՉԻԿ ՖԵՍՃԵԱՆԻ ԴԵՂԱՐԱՆԸ

Մանմուտ փառա Պաշի, պողաչանիին դէմ,
քիւ 261


Աւր պիտի գտնէք թարմ եւ առաջին տեսակէն խոտ ուղղու
Տաւաղիտի միակ միջատական փաշի, որ վարկենապէս կ'ապանէ ու կ'ընչեցէ մուկը
լուց (փրէ), ոգիւք, հաճեք, մծեղը (օրվրիտէէք), ուսինը (կիւլլ), բըրբըրը, ցոսեցի-ու-
սիչը եւ օրիչ խել մը փառապար միջատներ ու ճճիներ. այն փաշիները մեծ ու պղտիկ
մանաւոր աւփերու մէջ դրուած պարտաւ կը ծախին: Ուստի ամէն տանք բոսնք
պէտք ունին ուղղու միջատական փաշիի եւ կ'ուզեն գիշերները տնուշիկ-տնուշիկ քնու-
նալ եւ առողջութիւնն չը խանգարուած արթնալ, թող հոճին դիմել դեղարանն գնե-
լով առաջ մը փաշի, քանի որ այս տեսակ պէտք մը գահացնելու համար դեղարանն ունի
իր դիւրութիւնը՝ Պաշայ կտրիւր եւ կեդրոն մէկ տեղը գտնուելով: Աւելորդ նկատած
չենք ըլլար հոս տեղում մը եւս յիշեցնելու թէ՛ Դեղարանն որ Պաշ. հասարակութեան չը-
նարհիւ քիչ ժամանակուան մէջ ջերմ ընդունելութեան արժանացաւ իր ուղղամիտ գործու-
նէութեամբ, միշտ ծառայելով իր նպատակին, այն է դեղերու թարմութեամբ, դեղագրե-
րու արագ եւ ճշգրտօք պատրաստութեամբ, գիշերու լափաւրութեամբ եւ որ աւելին է
արուեստին խղճամբս գործադրութեամբ միշտ գոհ ձգելով իր ազնիւ յաճախողները:

Դեղարանն նաեւ Եւրոպական տան մը հետ ալ բանակցած ըլլալով ամէն շաբաթու Զուի-
ցերիական թարմ պատաւտաւոր քիւպեր (աչը գալէսի) կը հասնին բոթովով եւ գաւառա-
լին յանձնարարութիւնք փութով կը կատարուին:

Յիշենք նաեւ ամէն օր Դեղարանն յաճախող Հայ եւ օտարազգի բժիշկներէն մասնաւոր
բարձր ծանօթ Բժիշկ ԱԼԼԱՀՎԷՐՏԻ ԷՖ. որ ամէն Դ. Ե. Շ. օրէն ժամը 8—11 իրեն
դիմադ հիւանդները կը դարմանէ իր ծանօթ փորձառութեամբ եւ մանաւորութեամբ
դեղարանին մասնաւոր դարմանութեամբ:

Ահա մտաւ մը պարզելով Դեղարանին ներկայ վիճակը, կը յաւանք թէ արդայ յա-
ճախողները ինչպէս ցարդ, լեռ ալաւ եւս միշտ պիտի շարունակեն իրենց վստահութիւնը
Դեղարանին նկատմամբ, եւ փոխանակ հեռուոր տեղեր դիմելու՝ ուղղակի պիտի այցելեն
Դեղարանն, ուր ամէն տեսակ դիւրութիւններ պիտի ընծաւունին իրենց կատարելապէս գոհ
թողելու համար, քանի որ Դեղարանին սկզբունքը եղած է ՈՒՂԱՐԱՆԻ:

ԴԵՂԱՐԱՆՍ ՈՒՆԻ ՆԱՅԻ ԴԻՇԵՐԱՅԻՆ ՍՊԱՍ



Սնկարելի է որ, ընտանիք մը առանց կար՝
մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքե-
նայ մը սնենալ, որովհետեւ լաւ մեքենա՝
մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մա-
տուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը ան-
վերջ դժգոհութեանց եւ տաղաւակի աղբիւր մըն է։
Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ի

ՀԱՅՅԱՅԻՑ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ.

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի
միանգամայն մեքենաներ
կը գտնուին։

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն ա-
ւելի կատարելագործուածը, հաստատունը եւ գիւ-
րագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝
ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ։

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճա-
ռատանց մէջ՝

ՀԱՅՍՏԱՆԻ
ՄԱՍՆԱԿՎԱՐՈՒՄՆԵՐ

ԲԵՐԱ.

1. Մեծ փողոց, Պօն Մառէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին.
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւէին դէմ.

ԿՍՂԱԲԱ.

1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ.

1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13.

ՍԱԻԻՏԱՐ.

Չարչը Պօլու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնք ձեռքի.

Կասաբեալ Երաւասարութիւն:

Մասնահիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ։

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց,
Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղուլուի տունը։ 3—10

ԿԱՐՍՊԵՏ ԷՅ. ԻԻԹԻԻՃԵԱՆԻ Թարգ-	Արաւբձանին տղան	3	15
ժանած գիրքերէն հետեւեալները կը գըտ.	Հանրակրթութեան տնիքը	1	5
հունի Տէր-Մինասեան դրատունը եւ մայրա.	Սկզբունք Գեղ. Տնտեսութեան	1	4
քաղաքի միւս հայ գրավաճառներուն քով.	Ընտանեկան գողտիքներ	3	15
հասոք	դր. .		7—10
Կարմիր մարդոց երգումը	2	10	
Ընտանեկանը	2	15	
Փարիզի տմուսնութիւնները	1	2	
Թափառական Հրեայ	4	50	